



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

17 նոյեմբերի 2011 թվականի N 45

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթներին՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմիններին և առաջարկել տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական և այլ կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների սահմաններում ապահովել Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումը՝ սույն արձանագրային որոշման 1-ին կետով հավանության արժանացած հիմնադրույթներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՁԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. նոյեմբերի 23
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թ.
նոյեմբերի 17-ի նիստի N 45
արձանագրային որոշման

Հ Ի Մ Ն Ա Դ Ր ՈՒ Յ Թ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱԳՈՐԾՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ներածություն	1
2.	Ընդհանուր դրույթներ	1
3.	Իրավական հիմքերն ու իրականացված միջոցառումները	3
4.	Կոնվենցիայի իրագործման հիմնական սկզբունքները	4
4.1.	Դիտարկել տարածքը՝ որպես ամբողջություն.	4
4.2.	Ապահովել լանդշաֆտների պահպանությունը, կառավարումն ու պլանավորումը (լանդշաֆտային գործողություններ).	5
4.3.	Սահմանել և ձեռք բերել լանդշաֆտի որակի նպատակ.	6
4.4.	Գործողությունների հիմքում դնել լանդշաֆտների մասին գիտելիքը.	7
4.5.	Լանդշաֆտային գործողությունների մեջ ներգրավել հասարակությանը.	9
4.6.	Ինտեգրել լանդշաֆտային բաղադրիչը ոլորտային քաղաքականություններում.	9
4.7.	Ապահովել իրավասությունների տարանջատումը.	11
5.	Կոնվենցիայի իրագործման ֆինանսական ռեսուրսները և հետագա միջոցառումները.	12
6.	Լանդշաֆտի մոնիթորինգն ու զեկույցները (հաշվետվությունները).	12
7.	Միջազգային համագործակցությունը.	14

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը՝ 2004թ. մարտի 9-ին վավերացնելով «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիան» (ETS No. 176), ստանձնել է բնական և ձեռակերտ լանդշաֆտների պահպանության, կառավարման և պլանավորման գործընթացի իրականացման պարտավորությունը:

Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթների (այսուհետև՝ Հիմնադրույթներ) մշակումը հետապնդում է Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի գաղափարախոսությանը համահունչ՝ հասարակության կարիքների, տնտեսական գործունեության և շրջակա միջավայրի միջև համաչափ և ներդաշնակ փոխազդեցությունների վրա հիմնված կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման նպատակ:

2. Ընդհանուր դրույթներ

- 2.1. «Լանդշաֆտ» հասկացությունը դարեր շարունակ առավելապես ընկալվել է որպես գեղատեսիլ բնապատկեր, որն իր արտացոլումն է գտել գեղանկարչության, գրականության, ճարտարապետության և այլ արվեստներում: Ժամանակի ընթացքում մարդու կողմից լանդշաֆտների արժևորումը կրեց որոշակի զարգացումներ և աստիճանաբար ընդարձակվելով՝ ձևափոխվեց որակապես:
- 2.2. Քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց լանդշաֆտների զգալի մասը ձևավորվում է մարդկային գործունեների տարաբնույթ ազդեցությունների ներքո: Լանդշաֆտներն, ըստ էության, արտացոլում են մարդու կենսագործունեության բոլոր ձեռքբերումները և բացթողումները՝ դրանով իսկ կերտելով բնակավայրերի, տարածաշրջանների և ողջ երկրի տեսողական (վիզուալ) կերպարի գրավիչ կամ վանող բնութագրերը:
- 2.3. XX դարի 70-ական թվականները հատկանշվել են շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն ճնշումների կտրուկ աճով: Արդյունաբերության, քաղաքաշինության, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների, տուրիզմի և այլ ոլորտների առաջընթաց զարգացումը, ինչպես նաև համաշխարհային տնտեսության ընդհանուր փոփոխությունները՝ համադրվելով բնական ռեսուրսների սահմանափակության և էկոլոգիայի վատթարացման խնդիրների հետ՝ ծնում են նոր մարտահրավերներ, որոնց դիմակայելու անհրաժեշտությունը հանգեցնում է համաշխարհային հանրության կողմից կայուն զարգացման գաղափարախոսության ձևավորմանը:
- 2.4. Անցյալ դարի վերջում Եվրոպայի խորհրդի կողմից սկսեց մշակվել և 2000 թվականին ընդունվեց «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիան» (այսուհետև՝ Կոնվենցիա), որը ներկայացավ որպես լանդշաֆտներին վերաբերող «նոր հայեցակարգ»: Կոնվենցիայի առանձնահատուկ արժեքն ու նորարարությունը կայանում են նրանում, որ այն իմաստավորում է լանդշաֆտը, որպես մեզ շրջապատող բնական-պատմական-մշակութային-

քաղաքաշինական միահյուսված, միասնական միջավայր՝ առանց կենսատարածքն ըստ բաղադրիչների տարանջատելու:

- 2.5. Առաջին անգամ «լանդշաֆտ» հասկացությունը ձևակերպվեց որպես «մարդու կողմից ընկալվող տարածք, որի հատկությունները բնական և մարդկային գործոնների ազդեցության կամ փոխազդեցության արդյունք են», ինչից հետևում է, որ այսուհետև լանդշաֆտային քաղաքականության շրջանակներում դիտարկվելու են ոչ միայն պահպանության ենթակա արժեքավոր բնական և մշակութային տարածքներն ու գեղատեսիլ բնապատկերները, այլև սովորական առօրյա միջավայրը, լքված անօգտագործելի տարածքները, դեգրադացված հողամասերը և այլն:
- 2.6. Նոր հայեցակարգը կարևորում է նաև այն հանգամանքը, որ լանդշաֆտների որակական բնութագրերը էական ազդեցություն են թողնում մարդկանց ֆիզիկական և հոգևոր առողջության վրա, որոնց զգայական ապրումները մշտապես և անմիջականորեն փոխկապակցված են իրենց կենսագործունեության միջավայրի հետ: Միաժամանակ, այդ միջավայրի հատկանիշները կարող են խթանել կամ արգելակել տնտեսական զարգացումները: Գաղտնիք չէ, որ ներդրումային նախաձեռնությունների համար հատկապես գրավիչ են բարեկարգ և խնամված տարածքները:
- 2.7. Ըստ էության, հիմնված լինելով բնական և ձեռակերտ միջավայրերի ներդաշնակեցման գաղափարախոսության վրա և բացահայտելով լանդշաֆտի վրա բացասական անտրոպոգեն ազդեցությունների կանխարգելման ուղիները՝ Կոնվենցիան կարող է գնահատվել որպես կայուն զարգացման նպատակներին հասնելու արդյունավետ գործիք:
- 2.8. Հաշվի առնելով մեր երկրի փոքր չափերը, աշխարհաքաղաքական դիրքը, էներգետիկ ռեսուրսների և դեպի ծով ելքի բացակայությունը, ինչպես նաև տարաբնակեցման և գյուղատնտեսության համար պիտանի հողատարածքների սահմանափակ լինելը և, միևնույն ժամանակ, առանձնակի հարուստ մշակութային և բնական ժառանգությունը՝ հատկապես կարևոր է ըստ արժանվույն գնահատել և խթանել էնդոգեն զարգացման առկա ռեսուրսները, ստեղծելով քաղաքային և գյուղական ներդաշնակ միջավայրեր՝ բարեկարգ, գրավիչ և խնամված լանդշաֆտ: Այս գաղափարը միարժեքորեն համընկնում է քաղաքաշինության առջև դրված հիմնական նպատակի հետ, որը ձևակերպված է՝ «կենսագործունեության բարենպաստ միջավայրի ստեղծումը» բանաձևով:
- 2.9. Ուստի, լանդշաֆտների վրա տնտեսության զարգացումներից առաջացող անբարենպաստ ազդեցություններից զերծ մնալու համար կարևորվում է եվրոպական չափանիշներին համապատասխան մեր երկրում լանդշաֆտի պահպանության, կառավարման և պլանավորման ոլորտում փոխկապակցված գործողությունների հնարավորին լայն ներդրումը՝ լանդշաֆտի քաղաքականության ձևավորմամբ, տարածական և լանդշաֆտային պլանավորման արդիական մեթոդների կիրառմամբ:

2.10. Գնահատելով լանդշաֆտի որակն ու բազմազանությունը որպես համընդհանուր ռեսուրս, ինչպես նաև ելնելով նշված ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից, սույն Հիմնադրույթներով ամրագրվում են լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնական ուղղություններն ու սկզբունքները:

3. Իրավական հիմքերն ու իրականացված միջոցառումները

3.1. Հիմնադրույթների մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման 2011-2012 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 308-Ն որոշման հավելվածի ցանկի 1-ին կետի պահանջների կատարման անհրաժեշտությամբ:

3.2. Հիմնադրույթների մշակման համար հիմք են հանդիսացել.

3.2.1. «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիա» միջազգային պայմանագիրը, որը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2004 թվականի մարտի 9-ին.

3.2.2. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի իրականացման գերակա ուղղությունները» հանձնարարականը [CM/Rec(2008)3].

3.3. Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիան ստորագրելուց հետո իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

3.3.1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծվել է Հայաստանում Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի իրագործման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը.

3.3.2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N308-Ն որոշմամբ հաստատվել է «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը».

3.3.3. տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը կանոնակարգող օրենսդրական ակտերը լրացվել են լանդշաֆտի կազմակերպման խնդիրներին առնչվող դրույթներով.

3.3.4. մշակվել և հրատարակվել է «Տարածական պլանավորման փաստաթղթերում «Լանդշաֆտային կազմակերպում» բաժնի մշակման ցուցումներ» մեթոդական ձեռնարկը.

3.3.5. Եվրոպայի խորհրդի կողմից Հայաստանի Հանրապետության հետ համագործակցությամբ 2003 թվականի հոկտեմբերի 23-24-ը Երևանում անցկացվեց «Տարածական պլանավորումը և լանդշաֆտը» թեմայով սեմինար խորհրդակցությունը, որի շրջանակներում ՀՀ քաղաքաշինության նախարարության Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում բացվեց «Լանդշաֆտը երեխաների աչքերով» թեմայով մանկական աշխատանքների հանրապետական ցուցահանդեսը: Այն հետագայում տեղափոխվեց Ստրասբուրգ և ցուցադրվեց Եվրոպայի պալատում:

3.3.6. Եվրոպայի խորհրդի Տարածական պլանավորման համար պատասխանատու նախարարների համաժողովի (CEMAT) շրջանակներում 2003-2008 թթ. ընթացքում Երևանում կազմակերպվել են մի շարք կոնֆերանսներ, որոնց շրջանակներում քննարկման առանցքային թեմաներից էին նաև լանդշաֆտային խնդիրները:

3.3.7. թարգմանվել և հրատարակվել է ԵԽ-ի նախարարների կոմիտեի կողմից 2008 թվականի փետրվարի 6-ին ընդունված՝ «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի իրականացման գերակա ուղղությունները» փաստաթուղթը:

4. Կոնվենցիայի իրագործման հիմնական սկզբունքները.

Ստորև ներկայացված սկզբունքները անմիջականորեն բխում են Կոնվենցիայի հիմնական հոդվածների դրույթներից և հիմք են հանդիսանում լանդշաֆտային քաղաքականության իրագործման, այդ թվում՝ վարչական և ինստիտուցիոնալ խնդիրների կանոնակարգման համար:

4.1. Դիտարկել տարածքը՝ որպես ամբողջություն.

4.1.1.«Լանդշաֆտ» - մարդու կողմից ընկալվող տարածք, որի բնույթը՝ բնական և/կամ մարդկային գործոնների ազդեցության կամ փոխազդեցության արդյունք են:

4.1.2. Կոնվենցիայի դրույթները կիրառվում են երկրի ողջ տարածքում՝ ընդգրկելով բնական, գյուղական, քաղաքային ու քաղաքամերձ տարածքները, ներառելով հողային և ջրային մակերևույթները և վերաբերում են ինչպես առանձնահատուկ, այնպես էլ՝ սովորական (առօրյա) ու հետընթաց ապրող (դեգրադացված) լանդշաֆտներին:

4.1.3. Լանդշաֆտը ձևավորում է որպես մեկ ամբողջություն, որի մշակութային, արհեստական և բնական բաղադրիչները լիարժեքորեն ինտեգրված լինելով համընդհանուր ձևաչափի մեջ՝ կազմում են մարդկանց կենսագործունեության միջավայրը: Այն գնահատվում է որպես անհատական ու

սոցիալական բարեկեցության (ֆիզիկական, ֆիզիոլոգիական, հոգեբանական և ինտելեկտուալ իմաստով) և կայուն զարգացման նախապայման, ինչպես նաև՝ որպես տնտեսական գործունեությանը նպաստող ռեսուրս:

4.2. Ապահովել լանդշաֆտների պահպանությունը, կառավարումն ու պլանավորումը (լանդշաֆտային գործողություններ).

4.2.1. «Լանդշաֆտի պահպանություն» - լանդշաֆտի էական կամ առանձնահատուկ հատկանիշների պահպանությանն ուղղված գործունեություն՝ պայմանավորված բնական և/կամ մարդկային գործունեության արդյունք հանդիսացող ժառանգության արժևորմամբ:

4.2.1.1. Տարածքի արժեքավոր ու յուրահատուկ նյութական և ոչ նյութական հատկանիշները պետք է պահպանվեն և փոխանցվեն գալիք սերունդներին: Միևնույն ժամանակ, պահպանության գործողությունները պետք է ներառեն ժամանակի ընթացքում անխուսափելի փոփոխությունների համար ընդունելի շրջանակների սահմանումն ու այդ փոփոխությունների կառավարումը:

4.2.1.2. Լանդշաֆտի առանձնահատկությունները կախված են տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, մշակութային և պատմական գործոններից, որոնց ծագումը հաճախ գտնվում է պահպանվող տարածքներից դուրս: Ուստի այդ գործոնների բացահայտումն ու լանդշաֆտների բարձրարժեք բնութագրերի ձևափոխման կանխարգելումը ևս ընդգրկվում է պահպանական գործողությունների շրջանակում:

4.2.2. «Լանդշաֆտի կառավարում» - կայուն զարգացման հեռանկարներն ապահովող և տնտեսական, սոցիալական և այլ միջավայրային գործընթացներով պայմանավորված՝ լանդշաֆտի վրա ազդող փոփոխությունների ներդաշնակեցմանն ու կարգավորմանն ուղղված հետևողական գործունեություն.

4.2.2.1. Լանդշաֆտների կառավարումը կայուն զարգացման սզբունքների վրա հիմնված շարունակական և դինամիկ գործողություն է, որն ուղղված է տնտեսական, սոցիալական, բնական կամ տեխնաժին գործոնների հետևանքով լանդշաֆտների վրա ազդող և այն ձևափոխող երևույթների, պատճառների և իրավիճակների կարգավորմանը:

4.2.2.2. Այն կոչված է ապահովելու լանդշաֆտների ներդաշնակ զարգացումը՝ տնտեսական գործունեության և հասարակության կարիքների բավարարմանը նպատակաուղղված այնպիսի գործողությունների իրականացման ընթացքում, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդեցություն են թողնում տարածքի վրա:

4.2.3. «Լանդշաֆտի պլանավորում» - լանդշաֆտի զարգացման, վերականգնման կամ կազմավորման (ստեղծման) հեռանկարները կանխորոշող հաստատված գործունեություն.

4.2.3.1. Լանդշաֆտի պլանավորումը կարող է նույնացվել տարածական պլանավորման հետ, որը նպատակաուղղված է տարածքների հեռանկարային զարգացման, վերականգնման, կազմավորման (ստեղծման) կանխորոշմանը: Հաշվի առնելով հասարակության տնտեսական և սոցիալական պահանջների շարունակական զարգացումները, ինչպես նաև տարածքի բնական, մշակութային և այլ նախադրյալները՝ պլանավորման միջոցով ամրագրվում են լանդշաֆտների այնպիսի փոփոխություններ, որոնք կանխատեսելի են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում:

4.2.3.2. Պլանավորումն ընդգրկում է նաև դեգրադացված տարածքների վերականգնումն ու վերազարգացումը (ռեաբիլիտացիան)՝ դրանց բարելավման և լանդշաֆտի նախատեսված որակական բնութագրերին համապատասխանեցնելուն ուղղված միջոցառումների ամրագրմամբ:

4.2.3.3. Պլանավորումն ըստ էության՝ կայուն զարգացման նպատակներին հասնելու ուղիների տարածքային արտացոլումն է, դրանով իսկ հիմք հանդիսանալով կառավարման գործառույթների իրականացման համար:

4.2.4. «Լանդշաֆտային գործողություններ»- լանդշաֆտի պահպանության, պլանավորման և կառավարման միասնական գործառույթների իրականացում.

4.2.4.1. Ըստ էության, բոլոր լանդշաֆտները պահանջում են մարդու կողմից որոշակի միջամտություն՝ գործողություններ, որոնք միևնույն տարածքի վրա ուղղված պահպանության, կառավարման և պլանավորման միավորված գործառույթներ են:

4.2.4.2. Որոշ տարածքային հատվածներ և հատկանիշներ պետք է պահպանվեն, մնացածները՝ պատշաճ կերպով պլանավորվեն, որպեսզի առկա լանդշաֆտների փոփոխությունները և նորերի ստեղծումը լինի կանխատեսելի: Միևնույն ժամանակ, կառավարման գործառույթները՝ տարբեր համամասնություններով, պետք է կիրառվեն թե պահպանվող, թե փոփոխվող տարածքների նկատմամբ:

4.2.4.3. Լանդշաֆտի վրա ազդեցություն ունեցող ազգային, ռեգիոնալ և տեղական, ինչպես նաև ոլորտային (ճյուղային) ծրագրերը՝ յուրաքանչյուրն իր իրավասության սահմաններում, պետք է փոխկապակցված լինեն լանդշաֆտի որակի նպատակներով և համակարգվեն լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման շրջանակներում:

4.3. Սահմանել և ձեռք բերել լանդշաֆտի որակի նպատակ.

4.3.1. «Լանդշաֆտի որակի նպատակի սահմանում» - տարածքի ուսումնասիրության, նույնացման (իդենտիֆիկացման) և գնահատման արդյունքում՝ որակյալ լանդշաֆտի տեսլականի ձևավորվում.

4.3.1.1. Լանդշաֆտի որակի նպատակը պետք է սահմանվի բնակավայրերի, տարածաշրջանների և երկրի պլանավորման ու զարգացման փաստաթղթերում, ինչպես նաև լանդշաֆտի վրա ազդեցություն ունեցող ճյուղային (քաղաքաշինություն, տրանսպորտ, զբոսաշրջություն, ընդերքօգտագործում և այլն) ծրագրերում:

4.3.1.2. Որակի նպատակի սահմանումը պետք է կատարվի լանդշաֆտների բնորոշ առանձնահատկությունների, դրանց վրա ազդող գործոնների, ինչպես նաև զարգացման ներուժի մասին գիտելիքի հիման վրա՝ հասարակության կարծիքի հաշվառմամբ:

4.3.1.3. Լանդշաֆտի որակի նպատակներն, ըստ էության, լանդշաֆտի պլանավորման վերջնական արդյունքն են և պետք է սահմանեն նաև այն միջոցառումները, որոնք ձեռնարկվելու են որակյալ լանդշաֆտի տեսլականը կյանքի կոչելու համար:

4.4. Գործողությունների հիմքում դնել լանդշաֆտների մասին գիտելիքը.

4.4.1. Լանդշաֆտի մասին գիտելիքի ձեռքբերումը՝ ցանկացած լանդշաֆտային գործողության առաջին հիմնական փուլն է և ներառում է լանդշաֆտների նույնացման (իդենտիֆիկացման) ու գնահատման գործառույթներ.

4.4.1.1. Շահագրգիռ կողմերի մասնակցությամբ իրականացվում է ամբողջական տարածքի (ներառելով առանձնահատուկ, սովորական (ամենօրյա) և դեգրադացված մասերը) լանդշաֆտների նույնացումը, վերլուծվում են դրանց հատկությունները, ձևափոխող ուժերն ու գործոնները՝ նկատի առնելով առկա և ապագա հնարավոր փոփոխությունները:

4.4.1.2. Լանդշաֆտի նույնացման գործառույթը ներառում է տարածքի դիտարկման գիտելիքահենք տարբեր մոտեցումների (տնտեսական, սոցիալական, բնապահպանական, մորֆոլոգիական, պատմամշակութային, քաղաքաշինական, տեսողական/վիզուալ և այլն) ինտեգրումը, դրանց առանձնահատկությունների վերլուծությունն ու փոխկապակցումը:

4.4.1.3. Նույնացված (իդենտիֆիկացված) լանդշաֆտն այնուհետև գնահատվում է՝ հաշվի առնելով շահագրգիռ կողմերի և բնակչության կողմից առանձնացված արժեքները:

4.4.1.4. Լանդշաֆտների մասին համապարփակ իմացության ձեռքբերումը պահանջում է կոնկրետ տարածքի մասին միջոլորտային գիտելիքների համադրում և ամփոփում: Միևնույն ժամանակ, այն փոխկապակցված է տարածքի ապագայի տեսլականի, այսինքն՝ լանդշաֆտի որակի նպատակի հետ:

4.4.1.5. Լանդշաֆտի վերաբերյալ բնակչության էմպիրիկ գիտելիքները նույնպես պետք է վերլուծվեն՝ ինչպես պատմական զարգացման, այնպես էլ արդի նշանակության տեսանկյունից:

4.4.1.6. Լանդշաֆտների նույնացման և գնահատման գործընթացներում հասարակության ակտիվ ներգրավվածությունն ապահովելու համար՝ կատարված ուսումնասիրությունները պետք է ներկայացվեն դյուրըմբռնելի և մատչելի ձևաչափով, որպեսզի հասկանալի լինեն նաև ոչ մասնագետների համար:

4.4.2. Իրազեկության բարձրացում.

4.4.2.1. Բնակչությունը, կազմակերպություններն ու տարբեր մակարդակների իշխանության մարմինները պետք է իրազեկված լինեն լանդշաֆտի արժեքի, նշանակության և փոփոխությունների մասին:

4.4.2.2. Իրազեկության բարձրացումը գնահատվում է որպես գիտելիքի տարածման գործընթաց, որը գործում է բոլոր ուղղություններով և ընդգրկում է քաղաքացիական հասարակության բոլոր խմբերը:

4.4.2.3. Իրազեկության բարձրացման համար կարող են կիրառվել մշտական, պարբերական կամ իրավիճակային հիմունքներով իրականացվող միջոցառումներ, այդ թվում՝ հեռուստատեսային հեռարձակումներ, տեսա-լսողական միջոցներ, պատկերազարդ բուկլետներ, ցուցահանդեսներ և այլն: Վերջիններս կարող են ուղեկցվել հանրային քննարկումներով՝ տեղի բնակչության տեսակետները բացահայտելու համար: Լանդշաֆտային մոդելավորման գործիքները՝ 3-D մեթոդների կամ համալիր սխեմաների կիրառմամբ, առավել արդյունավետ են խնդիրների հստակ ընկալման առումով:

4.4.3. Ուսուցում և կրթություն.

4.4.3.1. Լանդշաֆտի հայեցակարգի հետ առնչվող խնդիրները պետք է ներառվեն տարածական պլանավորման, քաղաքաշինության, մշակույթի, բնապահպանության, գյուղատնտեսության,

տրանսպորտի, արտակարգ իրավիճակների կանխարգելման, ինչպես նաև լանդշաֆտի վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեցող այլ ոլորտների մասնագետների պատրաստման և վերապատրաստման ծրագրերում:

4.4.3.2. Կրթական ծրագրերը պետք է կազմվեն կայուն զարգացման վրա հիմնված լանդշաֆտի հայեցակարգին համահունչ՝ լանդշաֆտի և տնտեսական զարգացման, լանդշաֆտի և ռեկրեացիոն պաշարների լավարկման, լանդշաֆտի ու քաղաքաշինական միջավայրի միջև գոյություն ունեցող կապերը բացահայտելու և ուսուցանելու համար:

4.4.3.3. Ներկայումս նմանատիպ ծրագրերը եվրոպական կրթական ծրագրերի մասն են կազմում, որի շնորհիվ հնարավոր են դառնում երկրների միջև համալսարանական փոխանակումները:

4.4.3.4. Լանդշաֆտի հայեցակարգի իմացության պահանջը պետք է ներառվի նաև լանդշաֆտի վրա ներգործություն ունեցող ոլորտների կառավարման մարմինների աշխատակազմերի քաղաքացիական և համայնքային ծառայողների համար:

4.4.3.5. Տարբեր մակարդակների դպրոցական ծրագրերը պետք է խթանեն լանդշաֆտային խնդիրների մասին իրազեկումը՝ լանդշաֆտը մեկնաբանելու և կենսամիջավայրի ու լանդշաֆտի միջև կապերը ուսումնասիրելու միջոցով: Դրան կարելի է հասնել դպրոցական կրթական տարբեր առարկաներում (բնական գիտություններ, աշխարհագրության, պատմություն, տնտեսագիտություն, արվեստ, գրականության և այլն), ներառելով լանդշաֆտների արժեքը բացահայտող հիմնախնդիրները՝ զարգացնելու համար երեխաների զգայունությունը իրենց շրջապատի որակի հանդեպ:

4.5. Լանդշաֆտային գործողությունների մեջ ներգրավել հասարակությանը.

4.5.1. Լանդշաֆտային բոլոր գործողությունները պետք է ուղեկցվեն մասնակցային բաց ընթացակարգերով ու հասարակության մեջ ձևավորված պատկերացումների և ցանկությունների հաշվառմամբ՝ բնակչության և կենսամիջավայրի միջև փոխադարձ կապերի ամրապնդման, լանդշաֆտի սոցիալական ընկալման, ինչպես նաև լանդշաֆտային քաղաքականության ձևավորման, իրագործման և մոնիթորինգի հարցերում ժողովրդի ակտիվ դերակատարությունը ապահովելու համար:

4.5.2. Մասնակցային գործընթացը պետք է ընդգրկի բոլոր շահագրգիռ կողմերին՝ ազգային, տարածքային և տեղական իշխանություններին, ուղղակիորեն ազդեցության ենթարկված բնակչությանը, հասարակական կազմակերպություններին, տնտեսական գործունեության սուբյեկտներին, լանդշաֆտի մասնագետներին և գիտնականներին:

4.5.3. Հատկապես կարևոր է, որ մասնակցությունը տեղի ունենա լանդշաֆտի գործողությունների իրականացման բոլոր փուլերում, գիտելիքի ձեռքբերման նախնական փուլից՝ մինչև ընդունված որոշումների իրականացումը:

4.5.4. Հասարակության մասնակցության ընթացակարգերը կարող են իրականացվել հասարակական լսումների, հարցումների, քննարկումների, ցուցադրությունների և այլ գործիքների կիրառմամբ:

4.6. Ինտեգրել լանդշաֆտային բաղադրիչը ոլորտային քաղաքականություններում.

4.6.1. Լանդշաֆտային բաղադրիչը՝ պատշաճ ընթացակարգերի միջոցով պետք է լիարժեքորեն ինտեգրվի բնապահպանական, աղետների կանխարգելման, պատմամշակութային հուշարձանների պահպանության, ջրային ռեսուրսների կառավարման, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի, կոմունալ տնտեսության, հանքարդյունաբերության և տարածքների որակի վրա ազդեցություն ունեցող այլ

քաղաքականություններում: Ինտեգրումը վերաբերում է ինչպես կառավարման նույն մակարդակի տարբեր վարչական մարմինների (հորիզոնական ինտեգրում), այնպես էլ տարբեր մակարդակների կառավարման մարմինների (ուղղահայաց ինտեգրում) գործառույթներին:

4.6.1.1. Միևնույն ժամանակ, լանդշաֆտները՝ վերը նշված բոլոր ազդեցությունների փոխկապակցված արդյունք են, ուստի լանդշաֆտային խնդիրներն ու նպատակները պետք է դիտարկվեն բազմաթիվ և բազմազան միաժամանակյա ազդեցությունների ներքո՝ դրանց գնահատման և վերլուծության արդյունքում ձևավորելով լանդշաֆտի որակի փոխհամաձայնեցված նպատակներն ու դրանց ձեռքբերման ուղիները:

4.6.1.2. Տարածական պլանավորումը, ըստ էության, այն բնագավառն է, որը մեծապես բավարարում է վերը նշված պայմաններին:

4.6.1.3. Դրա հետ մեկտեղ, լանդշաֆտի բաղադրիչը պետք է կազմի ճարտարապետաշինարարական, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների, պատմամշակութային ժառանգության, տուրիզմի, բնապահպանական և այլ ոլորտային ծրագրերի ու նախագծերի բաղկացուցիչ մասը՝ հիմք ընդունելով և մանրամասնելով տարածական պլանավորման շրջանակներում լանդշաֆտի որակին առնչվող փոխհամաձայնեցված և ընդունված որոշումները:

4.6.2. Լանդշաֆտը և տարածական պլանավորումը.

4.6.2.1. Տարածական պլանավորման փաստաթղթերը մշակվում են երեք հիմնական փուլերով՝

- տարածքի առկա իրավիճակի ուսումնասիրություն և վերլուծություն (հենակետային տվյալներ),
- տարածքի համալիր գնահատական՝ տարածքի վրա ազդող բազմաթիվ բնական (վտանգավոր բնածին երևույթներ, երկրաբանական հիմք, բնակլիմայական պայմաններ, ռելիեֆ, հողային, ջրային, հանքահումքային ռեսուրսներ, կենսաբազմազանություն և այլն) և մարդածին (բնակավայրեր, գործառնական տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածք, վտանգավոր տեխնածին երևույթներ և այլն) գործոնների հաշվառմամբ,
- տարածքի հեռանկարային զարգացում (որակյալ լանդշաֆտների տեսլականը) և դրան հասնելու համար պահպանության, կառավարման և պլանավորման գործողությունների համակարգը, որոնք կազմում են տարածական պլանավորման արդյունքը:

4.6.2.2. Համադրելով տարածական պլանավորման երեք փուլերը լանդշաֆտի հիմնական գործողությունների հետ, ակնհայտ է, որ դրանք համընկնում են լանդշաֆտների «նույնացում (իդենտիֆիկացում)-գնահատում-լանդշաֆտի որակի նպատակի սահմանում» շղթային:

4.6.2.3. Տարածական պլանավորման փաստաթղթերը մշակվում են ազգային, ռեգիոնալ և տեղական մակարդակներում՝ տարածքների կազմակերպման խնդիրներին առնչվող բոլոր շահագրգիռ մարմինների մասնակցությամբ, ուստի ապահովում են ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց ինտեգրման պայմանները:

4.6.2.4. Գործող օրենսդրությամբ տարածական պլանավորման շրջանակներն արդեն իսկ ընդգրկում են լանդշաֆտային միջոցառումների բովանդակային մասը և կարող են արձագանքել լանդշաֆտային խնդիրների ողջ բազմազանությանը՝ գիտելիքի ձեռքբերման, հեռանկարային նպատակների սահմանման և դրանց հասնելու միջոցառումների մշակման առումով:

4.6.2.5. Ելնելով վերոգրյալից, լանդշաֆտի հայեցակարգից բխող մի շարք կարևոր գործառույթներ նպատակահարմար է իրականացնել տարածքային փոփոխությունների կառավարման

գործիքներով՝ տարածական պլանավորման (տարածքային հատակագծման նախագծեր, գլխավոր հատակագծեր, գոտևորման և կառուցապատման նախագծեր և այլն) մշակման միջոցով:

4.7. Ապահովել իրավասությունների տարանջատումը.

4.7.1. Կոնվենցիայի իրագործման իրավասությունները պետք է բաշխվեն վարչական տարբեր մակարդակների միջև՝ ըստ սուբսիդիարության (լրացուցչության) սկզբունքի, համաձայն որի որոշումները պետք է ընդունվեն բնակչությանը որքան հնարավոր է մոտ մակարդակում՝ այդպիսի որոշումների ընդունման հնարավորությունն ու դրանց արդյունավետությունը երաշխավորելու պայմանով:

4.7.2. Մինևույն ժամանակ, ավելի բարձր վարչական մակարդակները իրենց իրավասությունների սահմաններում ստանձնում են համակարգման լիազորություններ՝ տեղական մակարդակով իրականացված գործունեության հիմնավորվածությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով:

4.7.3. Վերոգրյալ սկզբունքների շրջանակներում Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի իրագործման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետև՝ Հանձնաժողով): Նույն որոշմամբ Կոնվենցիայի իրագործման պատասխանատու է ճանաչվել ՀՀ քաղաքաշինության նախարարությունը:

4.7.4. Հանձնաժողովի կազմում ընդգրկվել են լանդշաֆտի խնդիրներին առնչվող բոլոր շահագրգիռների՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, գիտական, կրթական ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

4.7.5. Հանձնաժողովի ընդարձակ կազմը թույլ է տալիս լանդշաֆտի խնդիրների շուրջ ստեղծել ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց համագործակցության կապեր՝ խուսափելով հաստատությունների կողմից իրականացվող գործառույթներում չճշգրտված կամ նույնիսկ հակասող մոտեցումների վտանգից: Հանձնաժողովն արդյունավետ խորհրդակցական հարթակ է հանդիսանում Կոնվենցիայի իրագործման փոխհամաձայնեցված միջոցառումների իրականացման համար:

4.7.6. Հաշվի առնելով լանդշաֆտի հայեցակարգից բխող խնդիրների զգալի մասի տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման շրջանակներում ընդգրկման նպատակահարմարությունը՝ առանձնակի կարևորություն են ստանում համայնքների մակարդակում կազմվող գլխավոր հատակագծերն ու գոտևորման նախագծերը: Տեղական մակարդակում կազմվող այդ փաստաթղթերում առավել մանրամասնորեն են դիտարկվում տարածքի կազմակերպման խնդիրները, ինչը հնարավոր է դարձնում լանդշաֆտի հայեցակարգից բխող կարևոր գործնական միջոցառումների, այդ թվում՝ լանդշաֆտի նույնացման, գնահատման ու որակի նպատակների հավոր պատշաճի սահմանումը:

5. Կոնվենցիայի իրագործման ֆինանսական ռեսուրսները և հետագա միջոցառումները.

5.1. Լանդշաֆտի քաղաքականության իրագործման ֆինանսական ապահովումը կարող է կատարվել պետական ու համայնքային բյուջեների, ինչպես նաև մասնավոր ներդրողների և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին: Դրանք կարող են տրամադրվել ինչպես նպատակային՝ ուղղված լանդշաֆտի հայեցակարգից բխող խնդիրների լուծմանը, այնպես էլ ներառվել այլ ոլորտների (շրջակա միջավայր, տուրիզմ, մշակույթ, շինարարություն, տրանսպորտ և այլն) ծրագրերում՝ նշված ծրագրերի արդյունքում լանդշաֆտի վրա ազդեցություն ունեցող խնդիրների լուծման նպատակով նախատեսվող միջոցների հաշվին:

5.2. Կոնվենցիայի իրագործման կարճաժամկետ միջոցառումները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N308-Ն որոշման հավելվածով, իսկ հետագա միջոցառումները կներառվեն նշված հավելվածի 4-րդ կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում լանդշաֆտների պահպանության, կառավարման ու պլանավորման ռազմավարության մշակման շրջանակներում:

6. Լանդշաֆտի մոնիթորինգն ու զեկույցները (հաշվետվությունները).

6.1. Ժամանակակից լանդշաֆտների վրա ազդող ուժեղ ճնշումները և լանդշաֆտի պահպանման, կառավարման և պլանավորման հետ կապված բազմաթիվ խնդիրները պահանջում են շարունակական դիտարկումների և տեղեկատվության փոխանակման գործողությունների իրականացում: Մոնիթորինգային դիտարկումները պետք է կատարվեն տարբեր մակարդակներում՝ տեղական, ռեգիոնալ, ազգային կամ միջազգային, կիրառելիվ համատեղելի դիտորդական համակարգեր և ապահովելով անընդհատ փոխանակման հնարավորություն:

6.1.1. Լանդշաֆտի մոնիթորինգային դիտարկումները պետք է իրականացվեն՝

- լանդշաֆտի պահպանության, կառավարման, պլանավորման վերաբերյալ իրականացված և նախատեսվող ծրագրերի, գործողությունների, միջոցառումների, ինչպես նաև հասարակության ընդգրկման մասին տեղեկատվության վերլուծության հիման վրա,
- լանդշաֆտային քաղաքականության արդյունավետության գնահատման նպատակով մշակված քանակական և որակական ցուցիչների հիման վրա,
- սկզբնական լանդշաֆտի և տվյալ տարածքում առկա տենդենցների համեմատական վերլուծության հիման վրա:

6.1.2. Մոնիթորինգային դիտարկումների իրականացման նպատակով բազմաթիվ եվրոպական երկրներում ստեղծվել են լանդշաֆտի մոնիտորինգի մարմիններ, կենտրոններ կամ ինստիտուտներ: Մեզանում նմանատիպ կառույցի ստեղծումը նպատակահարմար է նախատեսել միջնաժամկետ հեռանկարում:

6.1.3. Մինչև մոնիթորինգի կենտրոնի ստեղծումն անհրաժեշտ է մշակել եվրոպական երկրներում ընդունված չափորոշիչներին համապատասխան ցուցիչների համակարգ, իսկ մոնիթորինգային գործողություններն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N308-Ն որոշման 2-րդ կետով սահմանված հանձնարարականին համապատասխան:

6.2. Զեկույցներ (հաշվետվություններ) Կոնվենցիայի իրագործման վերաբերյալ.

6.2.1. Կոնվենցիան վավերացրած պետությունները որոշակի պարբերականությամբ մշակում են միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված գործողություններն ամփոփող ու դրանց արդյունավետությունը գնահատող զեկույցներ (հաշվետվություններ):

6.2.2. Զեկույցը մշակվում է շահագրգիռ մարմինների միջև համագործակցությամբ և ներառում է Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված միջոցառումների լուսաբանումը, դրանց գործնական կիրառման արդյունքները, ծագած խնդիրները, ինչպես նաև կարող է պարունակել հիմնախնդիրների լուծման նոր առաջարկներ:

6.2.3. Հայաստանի Հանրապետությունում Կոնվենցիայի իրագործման վերաբերյալ զեկույցները (հաշվետվությունները) մշակվում են կիսամյակային պարբերականությամբ՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի մարտի 24-ի N308-Ն որոշման 2-րդ և 3-րդ կետերով սահմանված կարգով:

6.2.4. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից նշանակվում են փորձագետների կոմիտեներ, որոնք պատասխանատու են Կոնվենցիայի իրագործմանը հետևելու համար: Կոնվենցիայի ընթացիկ և կատարված աշխատանքների մասին փորձագետների կոմիտեների զեկույցները Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը փոխանցում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին:

7. Միջազգային համագործակցությունը.

7.1. Միջազգային համագործակցության շրջանակներում լանդշաֆտի հայեցակարգի վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը, տեսական, մեթոդոլոգիական և էմպիրիկ գաղափարների շրջանառությունը կարևոր նշանակություն ունի Կոնվենցիայի իրագործման արդյունավետությունը երաշխավորելու և դրա նպատակներին հասնելու հարցում:

7.2. Համագործակցությունն իրականացվում է Կոնվենցիայի դրույթների շրջանակներում ընդգրկված բոլոր խնդիրների շուրջ՝ միջազգային միջոցառումներին ու ծրագրերին աջակցելու ու լանդշաֆտների հետ կապված

քննարկումներին մասնակցելու, միմյանց տեխնիկական և գիտական աջակցություն ցուցաբերելու, գիտահետազոտական ծրագրերի ու փորձի, ինչպես նաև ուսուցման և տեղեկատվության նպատակով լանդշաֆտի մասնագետների փոխանակման միջոցով: